կանդիդատներ պէտք է համարել։ Կարգադրող մասնաժողովի անդամներ ընտրվեցան հետևեալ անձինք՝ պ. պ. Միքայէլ Շահ-Պարոնեանց, Խաչատուր Քալանթարեան, Աբ. Յովհաննիսեան, Նիկ. Խօսրովեան, Աբիսողոմ Յովհաննիսեան, Ա. Բահաթրեան, Գէորգ Բարխուդարեան, Ս. Սպանդարեան, Ա. Երիցեան, Վ. Մուրադեան, Աղէք. Քիշմիշեան և Յով. Զիգիանեան և կանդիդատներ՝ Միք. Սալամբէգեան, Գ. Եւանդուլով, Բագրատ Նաւասարդեանց (այն էլ կանդիդատ) և Ա. Բաբայեան (բժիշկ)։ Ընտրութիւնը պէտք է ասել շատ անաջող էր, որովհետև այնպիսի մարդիկ ստացան շատ ձայներ, որոնք ոչ միայն ժողովներին չեն եկել, այլ և չեն համակրել և ընդհակառակն այնպիսի մարդիկ էլ 2 և 3 ձայն ստացան, որոնք, առանձին վերցրած, կարելի է ասել որ ընտրվածներից $^1/_2$-ից աւելի ծանրակշիռ են. բայց մխիթարվելով գոնէ այն յոյսով, որ 16 ընտրվածների մէջ գոնէ 3—4-ն էլ իսկ արժանաւոր մարդիկ են, մենք վերջացնում ենք այս հարցի վերաբերութեամբ խօսելը և մաղթում ենք յաջողութիւն գործին։ Բայց, մի բան կայ այդտեղ, որի մասին մենք ամօթ կը համարենք մեզ չը խօսել. կարգադրող մասնաժողի մէջ, ինչպէս տեսնում էք, ընտրվել են պ. Խաչ. Քալանթարեան և Յով. Զիգիանեանց. այս այն մարդիկն են, որոնք անցեալ տարի ընտրվեցան մասնաժողովի անդամներ և որոնք իսպառ հրաժարվեցան՝ չը համակրելով և անկարելի ու ապարդիւն համարելով կայանալիք ժողովը։

Պ. Խաչատուր Քալանթարեանը, ասենք թէ, փաստաբան լինելով, կարող էր սխալվել. նա, օրինակ, կարծում էր, որ այն մօտաւորապէս ընդունված ծախսվելիք 5,000 րուբլ այնպիսի մի մեծ գումար է, որով կարելի է 15—20 դպրոց բանալ և խորհուրդ էր տալիս գործադրել վերջին նպատակի համար, բայց ի՞նչ կասէք դուք պ. Զիգիանեանցի վերաբերութեամբ, որը ուսումնարանական մարդ է համարում իրան, տեսուչ էլ է և որը գրաւոր կերպով իսպառ հրաժարվելուց և զանազան խոչընդոտներ դնելուց յետոյ, այժմ, երբ արդէն մի քանի մարդոց շնորհքով գործի $^2/_3$ մասը շինած է, այժմ նա կրկին մտնում է գրեթէ պատրաստ գործի մէջ, և ընտրվում է մինչև անգամ մասնաժողովի անդամ....

Հետևեալ համարում կը ծանօթացնենք ընթերցողներին ապագայ ուսուցչական ժողովի պարապմանց ծրագրի հետ, որը մինչև այսօր մեզանից անկախ պատճառներով անկարելի եղաւ հրատարակել, իսկ այժմ կրկին և կրկին ցանկանալով գործին յաջողութիւն և հաւատացած լինելով, որ ժամանակը ամենը բան հարթում է, ես վստահանում եմ կարգադրող մասնաժողովի յարգելի անդամներին առաջարկելու՝ ա) հրաւիրել այդ մասնաժողովին մասնակցելու մի քանի տիկիններ և գուցէ օրիորդներ, որոնք, ինչպէս յայտնի է, անցեալ տարիներին ցոյց տուին իրանց շնորքը հասարակական գործերում (սովատանջների օգնութեանը) և բ) ընտրել մի մշտական քարտուղար, որը իմանար քարտուղարական արհեստը և իր քմքի համաձայն չը խաղ անէր բառերի և ֆրազների հետ, որի համար վերևը նկատեցինք արդէն։ Ապագայ ժողովի նշանակութեան մասին, մենք արդէն ասացինք (Մշակ 141 №), որ դա մեր ազգի համար մի նշանաւոր և խորհրդաւորակտ է, և որ այդ ժողովի բազմակողմանի արդիւնաւոր հետևանքները թագցրած են մեզանից. այս յոյսով հաւատացած ենք, որ „Մշակը“ կը սկսէ շուտով իր պրոպոգանդան և նորա ձայնը չի մնայ առանց արձագանքի դպրոցասէր հասարակութեանց սրտերում. յուսանք և սպասենք....

Կ. Կ.

ՆԵՐՔԻՆ ԼՈՒՐԵՐ

Ստայանք յօդուա «Ժուրնալ դ'Օրիան» լրագրի պ. Պետրոս Սէլքումեանից, Շամախուց 1 րուբլ 50 կոպէկ։ Առաջվայ 954 րուբլ 93 կոպէկի հետ կանի 955 րուբլ, 63 կոպէկ։

—

Թիւրքիան երևի սաստիկ է վախենում հայոց ինդրից, որ ոչ թէ միայն առհասարակ արգելել է «Ժուրնալ դ'Օրիան» լրագրի մուտքը օսմանեան կայսերութեան մէջ, բայց մինչև անգամ Կ. Պոլսի մէջ եղած մեծ պետութիւնների դեսպանների անունով ուղարկվող համարները թիւրքաց փոստը յետ է դարձնում Վիէննա։ Այդ տեսակ բան անել թիւրքաց կառավարութիւնը ոչինչ իրաւունք չունի. դեսպանները միշտ կարող են ստանալ ամեն տեսակ արգելված հրատարակութիւններ և երբ կիմանան թիւրքաց փոստային վարչութեան այդ կամայական վարմունքը, երևի իրանք կը բողոքեն այդ վարմունքի դէմ։

—

Ամեն քաղաքում, առհասարակ, փողոցները մաքրում և աւելում են վաղ առաւօտեան, երբ քաղաքի բնակիչները դեռ իրանց տներից դուրս եկած չեն, իսկ Թիֆլիսի քաղաքային վարչութիւնը կարգադրութիւն է արել աւելել փողոցները կէսօրին, երբ ամբողջ քաղաքը ոտքի վրա է և փողոցները լի են անց ու դարձներով։ Այդպիսով քաղաքային վարչութիւնը կատարելապէս թունաւորում է օդը. փողոցներում անհնարին է շրջել աննկարագրելի թոզի պատճառով, որ բարձրացնում են հարիւրաւոր մշակները իրանց աւելներով։

ԱՐՏԱՔԻՆ ՏԵՍՈՒԹԻՒՆ

ԲՈԼԳԱՐԻԱ

—

Իշխան Ալէքսանդր պետական խորհրդի կազմելու մասին հետևեալ բովանդակութեան հրովարտակ հրատարակեց։ „Իշխան Ալէքսանդր հիմնում է պետական խորհուրդը, որպէս զի նա օգնի իշխանին երկիրը կազմակերպելու ժամանակ։ Խորհուրդը այն սկզբունքների վրա հիմնված կը լինի, որ ցոյց է տուած ռուսական սահմանադրութեան նախագծի մէջ։ Այդ նախագիծը առաջարկվեցաւ բոլգարական ժողովի քննութեանը Տիրնովոյի մէջ, որ մերժեց նրա գործադրութիւնը։ Իշխանը աւելացնում է, որ նա ընտրեց այդ նախագիծը, որովհետև ինքը համոզված է, թէ նա երկրին մեծ օգուտներ կը տայ։ Իշխանը իրաւունք է տալիս բոլգարացիներին ընտրել խորհրդի անդամների երկու երրորդական մասը, չը նայելով, որ նախագծի համեմատ ժողովուրդը պէտք է ընտրէր խորհրդի անդամների կէսը։ Իշխանը յոյս ունի ժողովրդի ազգասիրութեան վրա և հրաւիրում է բոլգարացիներին այնպիսի անդամներ ընտրել խորհրդի համար, որոնք կարող են լաւ կատարել իրանց պարտականութիւնները և կը ձգտեն իշխանի և ժողովրդի մէջ միութեան հաստատելուն։ Պետական խորհուրդը կազմված կը լինի՝ ժողովրդից ընտրված 8 անդամներից և իշխանից նշանակված չորս անդամներից, բացի այդ խորհրդին կը մասնակցեն երեք անդամներ, որոնք ուղղափառների, մահմեդականների և հրէաների ներկայացուցիչներ կը լինեն։ Մինիստրներն էլ իրաւունք ունեն մասնակցել խորհրդի նիստերին և միայն խորհրդակցական ձայնի իրաւունք կունենան իրանց բաժնին վերաբերեալ հարցերի քննութեան ժամանակ։

ԱՄԵՐԻԿԱ

—

Ամերիկայից ստացված լրագիրները սգի սև շրջանակներ ունեն, որոնք ոչ թէ միայն ամբողջ համարի շուրջն են, այլ և առանձին սիւները այդպիսի շրջանակներ ունեն։ „New York Herald“ լրագրի մէջ տպված են հանգուցեալ և այժմեան նախագահների պատկերները։ Գարֆիլդի վերջին լրագրերի մասին յիշեալ լրագիրը նկատում է։ Երկար ժամանակ մահուան ընդդիմացող մեծ սիրտը այլ ևս չէ բաբախում։ Ուշաթափութենից ուշքի գալով, նա ձեռքը դրեց սրտի վրա և բացականչեց. „ինչպէս ցաւում է սիրտս“։ Բայց գիտութիւնը անզօր էր, որովհետև մարդ մեռնում էր։ Նրա անկողնի շուրջը կանգնած էին մարդիկ, որոնց ձեռքին էին գիտութեան բոլոր միջոցները, բայց նրանք ոչինչ չը կարողացան անել բնութեան ամենազօրեղ ոյժի դէմ։“

Նոյն օրը երեկոյեան Միացեալ Նահանգների նախկին նախագահ գեներալ Գրանտ հասաւ Նիւ-Իորկ և այնտեղից գլխաւոր կառավարչին ուղարկեց հետևեալ հեռագիրը։ „Յայտնեցէք հանգուցեալ նախագահի ընտանիքին իմ խորին ցաւակցութիւնը և համակրութիւնը։ Ամբողջ ժողովուրդը բաժանում է հանգուցեալ նախագահի ընտանիքի վիշտը։“

Յանցաւոր Գիտոի պաշտպանը հասաւ Վաշինգտոն։ Նա յայտնել է, որ իր պաշտպանութիւնը այն հանգամանքի վրա կը հիմնի, որ Գիտո խելագար է։ Յանցաւորի

Ուրեմն ինչպէս է գոյանում իրաւունքը, եթէ ոչ սովորութիւնը (обычай) և ոչ էլ գիտութիւնը չեն նրա ծագման պատճառը. նրա գոյութեան պատճառը օրէնքն է, այսինքն տէրութեան գիտակցական գործողութիւնը դէպի յայտնի նպատակ, որ կատարում է այն նորոգումները (реформы), որոնք վերաբերվում են երկրի օրէնսդրութեան զանազան ճիւղերին։

Նոր օրէնքը իր հաստատելում շատ անգամ հանդիպում է մեծ խոչընդոտների այն մարդկերանցից կամ դասակարգից (сословіе), որոնց ինտերեսներին նա կպչում է, որտեղից յառաջ է գալիս յամառ ընդդիմադրութիւն, որ չարունակվում է տարիներ և տասնեակ տարիներ։ Նոր իրաւունքը պէտք է գործ դնի իր բոլոր ոյժը, զօրութիւնը և կռուով բռնի իր տեղը։ Այսպէս են դուրս եկել երկար պատերազմներից և փառաւոր յաղթութենից յետոյ պատմական բարիք, ինչպէս են ստրուկների ազատութիւնը Ամերիկայում ահեղ պատերազմից յետոյ 186... կալուածատէրերի ճորտեր պահելու իրաւունքի ոչնչացնելը Եւրոպայում, (ժակերիա ասված պատերազմը Ֆրանսիայում 1358 թ.), գիւղական պատերազմը Գերմանիայում 1523—30, որով հասարակ գիւղական դասը այս երկրներում կամենում էր թօթափել ֆէօդալների իշխանութիւնը, որ իսկապէս յաջողվեցաւ Ֆրանսիայում միայն ֆրանսիական մեծ յեղափոխութեան միջոցով 1789 թ.։ Կռուի միջոցով չէր որ Իտալիան 50 և 60 թուականներին Աւստրիայից անկախ ապրելու իրաւունք ձեռք բերաւ։ Ազատ ապրելու և յառաջադիմութեան շաղով ընթանալու իրաւունքը յոյները այնքան թանգ էին համարում, որ ոչինչ չը խնայեցին նրան ձեռք բերելու սրանից 60 տարի առաջ ապստամբվելով տաճիկներից. նոքա լաւ գիտէին, որ ստրկական լծից ազատվելու համար բաւական չէ միայն լալ և աղաղակել և օտարաց օգնութեան ակնկալել։ Ո՞ւմ յայտնի չէ որ Աստուած պաշտելու իրաւունքը ըստ իր համոզմանց մարդ նոյնպէս կռուով և արիւնով է ձեռք բերել։ Չը կայ ոչ մի ազգ փոքր ի շատէ քաղաքակրթված, որ արիւնահեղ պատերազմներ չը լինի վարած իր դաւանութեան ազատութիւնը ձեռքից չը տալու համար։ Այսպիսով տեսնում ենք, որ իրաւունքը իր պատմական ընթացքում մեզ ներկայացնում է անվաստակ աշխատութեան, ձգտման և կռուի հանդէս։

Նախկին չկոլայի ուսումը (Սավինի և Պուխտա ներկայ դարուս առաջի կիսում) նրանով է վնասակար, ասում է Ռուդոլֆ Երինգը, որ ուսուցանելով իրաւունքի խաղաղ ծագումը, մոլորեցնում է ամբոխը հէնց այն ասպարիզում, որտեղ նա պարտ է գործել, աչքի առաջ ունենալով յայտնի նպատակ, գործ դնելով իր բոլոր զօրութիւնը և իրանից կախված միջոցները. մոլորեցնում է նրանով, որ գործը իբր թէ ինքն իրան կարող է յառաջ ընթանալ և բաւական է որ մարդս ձեռը ջիրը դրած սպասէ, որ այս կամ այն իրաւունքը մանանայի նման երկնքից ինքն իրան վայր իջնէ։ Եւ կարող ենք արդեօք բողոքել այս, հանգամանքի դէմ, ասում է հեղինակը. ընդհակառակ այն հանգամանքը որ ժողովրդների իրաւունքները պատրաստի երկնքից չեն իջել, այլ թէ ձեռք են բերված մեծամեծ դժուարութիւններ յաղթելով և արիւն թափելով, հէնց պատճառ եղաւ, որ ազգերը սերտ կերպով կապված են իրաւունքների հետ, այնպէս, ինչպէս որ մայրը իր ծնած մանկան հետ։ Առանց աշխատանքի գտած իրաւունքը հեշտութեամբ էլ կարելի է կորցնել։ Քամու բերածը քամին էլ կը տանի, բայց ժողովուրդը արիւնահեղ պատերազմի միջոցով գնած իրաւունքը չի թողնի, որ իր ձեռքիցը խլեն, ինչպէս մայրը իր զաւակը։

II.

Մինչև հիմայ մեր խօսքը ընդհանուր իրաւունքի վրա էր *), որ պատկանում է ամբողջ ժողովրդին, ամփոփում է իր մէջ ընդհանուր դրութիւններ, այժմ խօսենք կոնկրէտ կամ յատուկ իրաւունքի **) մասին, որ վերաբերում է անմիջապէս ամենայն մի անհատի։ Ամենայն մի իրաւունքի խախտման ժամանակ իրաւատիրոջ մէջ ծագում է մի հարց՝ արդեօք նա պարտաւոր է պաշտպանել իր իրաւունքը, հարկաւոր է հակառակորդին ընդդիմադրել, թէ պէտք է հրաժարվել իր ոտնակոխ եղած իրաւունքը պաշտպանելուց։ Ըստ երևոյթին այս հարցը ինքն իրան վճռվում է այսպէս. եթէ վէճի ենթակայ առարկան իրաւատիրոջ (правообладатель) համար թանգ արժէ, այն ժամանակ նա դատ կը բանայ, հակառակ դէպքում նա կը զոհէ իրաւունքը հանգստութեան։ Այսպէս—իրաւունք պաշտպանելու հարցը ստանում է հաշի կերպարանք, որով երկու կողմից էլ դատաստանին յանձնելուց առաջ կշռվում են շահը և վնասը։

Բայց բանը այսպէս է միայն ըստ երևոյթին և ճշմարիտ, ով չէ պատահել իր կեանքում շատ պրոցեսներ, որոնք ամենևին հիմնված չեն շահի վրա, այլ թէ սկսված են անձնական պատիւը չոչափելու պատճառով, ինչով կարելի է բացատրել, որ շատ անգամ մարդիկ դատական վէճ են բանում առաջուց իմացած լինելով, որ այդ իրանց շատ թանգ կը նստի։ Բայց թողնենք առ ժամանակ երկու անհատների իրար մէջ ունեցած վէճը և նրանց տեղ դնենք երկու ազգ, որոնցից մէկը դիցուք անիրաւաբար խլում է միւսից մէկ քառակուսի մղոն անպէտք հող. պէտք է երկրորդը սկսի պատերազմ, թէ ոչ։ Բարեբաղդաբար շատ սակաւ են մարդիկ, որոնք խորհուրդ կը տան տէրութեան լռել կամ հաշտվել որ և իցէ կերպով, որովհետև ամենին յայտնի է, որ այն ազգը, որ կը լռի այսպիսի հանգամանքում, իր մահվան վճիռը կը ստորագրի։ Եթէ ժողովրդից կարելի է անպատիժ խլել մի մղոնի չափ հող, կարելի նոյնպէս խլել և միւսը, երրորդը, մինչև որ բոլորովին էլ ոչինչ չի մնայ, մինչև որ տէրութիւնը կը ոչընչանայ և հէնց այդպէս էլ հարկաւոր է, այդ ազգը լաւագոյնին արժանի չէ։

Եթէ ազգը պարտաւոր է իրան պաշտպանել մանաւանդ հողի պատճառով, առանց ուշք դարձնելով նրա արժանաւորութեան վրա, ինչու գիւղացին մի և նոյնը չը պիտի անէ, եթէ մէկը անիրաւաբար ցանէ նրան պատկանած պտուղը, կամ թէ որ և իցէ կերպով փչացնէ նրա դաշտային աշխատութեան արդիւնքը (ի հարկէ մեր խօսքը այն արարմունքների մասին է, որոնք հիմնվում են անբարեխղճութեան վրա — недобросовѣстность, որ միայն կարող է պատճառ

*) Объективное право.

**) Субъективное право.

պաշտպանը արդէն խնդրել է դադարեցնել դատաստանական քննութիւնը մինչև հրաւիրված վկաները հաւաքվին։

ԳԵՐՄԱՆԻԱ

Զը նայելով, որ կոմս Հայնֆելդ չէ կամենում թողնել դեսպանի պաշտօնը Կ. Պոլսում, այնու ամենայնիւ Բերլինի մէջ նրա համար պատրաստում են արտաքին գործերի մինիստրի պաշտօնը։ Հաւանական է, որ գերմանական դեսպան Կ. Պոլսի մէջ կը նշանակվի Բադէնից։

Բայխստագի գումարումը նշանակված է նոյեմբերի 15-ին։ Բայխստագին ներկայացնելու առաջարկութիւնները կը քննվին նախապատրաստական ժողովի մէջ և նախագիծների բովանդակութիւնը կախված կը լինի նրանից, թէ բայխստագը ինչպիսի կազմակերպութիւն կունենայ։ Եթէ բայխստագի մէջ իշխան Բիսմարկի կողմնակիցներից մեծամասնութիւն կը կազմի, նա կը շարունակէ իր գոյութիւնը, հակառակ դէպքում ծննդեան տօներից յետոյ բայխստագը կարձակվի և նոր ընտրութիւններ կը նշանակվին։ Եթէ մինչև անգամ իշխան Բիսմարկին ձեռնտու մեծամասնութիւն կազմվի, այնու ամենայնիւ առաջին շրջանին կառավարութիւնը չի ներկայացնի ծխախոտի արտօնութեան և բանւորների ապահովելու օրինագիծները։

Պաշտօնական լրագիրները պաշտպանում են կառավարութեանը այն մեղադրանքի դէմ, իբր թէ նրա անզգոյշ վարմունքը առիթ է տուել Վատիկանի և գերմանական կառավարութեան մէջ կատարվող բանակցութիւնների սառնութեանը։ Լրագիրները պնդում են, որ երկու կառավարութիւնների մէջ խաղաղ բանակցութիւնները շարունակվում են և կարող են ցանկալի հետևանքներ ունենալ։

Պրուսական պարլամենտի նախկին պատգամաւոր Ֆոն-Ունրու, որ հրատարակեց իր յիշողութիւնները իշխան Բիսմարկի գործունէութեան մասին 1848 թուականից, յայտնում է լրագիրների մէջ, որ նա մտադիր է դատաստանի ենթարկել իշխանի օրգան „Nord Deut. Alg. Zt.“ լրագիրը վիրաւորանքի համար։ Յիշեալ լրագիրը անազնուութիւն է անուանում իշխան Բիսմարկի մասնաւոր խօսակցութիւնների հրատարակութիւնը, որոնցով իշխանը անհամակրելի անձնաւորութիւն է նկարագրվում։ Բիսմարկի լրագիրը իր սովորութեան համեմատ խստութեամբ յարձակվեցաւ Ֆոն-Ունրուի դէմ և այժմ նա կենթարկվի դատաստանական պատասխանատուութեանը։

ԱՐՏԱՔԻՆ ԼՈՒՐԵՐ

—«Times» լրագրի Բերլինի թղթակիցը հաստատում է, որ իշխան Բիսմարկ իր մասնաւոր խօսակցութեան ժամանակ Բերլինի կոնգրէսի անդամների հետ, չէր ծածկում, որ Բալկանեան թերակղզու ապագան պատկանում է Ռուսաստանին և Աւստրիային և որ Անգլիան ոչինչ չունի արգելել այդ պետութիւններին հասնելու իրանց նպատակին, միայն թէ թողնէին իրան Եգիպտոսը։

—Աւստրիական լրագիրների խօսքերով Բուխարէստում, Կասայում, Գալացում և ռումինական այլ քաղաքներում կազմվեցան հրէական մասնաժողովներ օգնելու հրէաների գաղթականութեանը Պալէստինում։ Մի և նոյն նպատակով բացված են փողի ժողովարարութիւններ, որոնք շատ յաջող են գնում։ Կենտրոնական մասնաժողովը դիմեց Թիւրքիայի ներկայացուցչին Բուխարէստում հրէական ազգաբնակութեան համար հողեր ձեռք բերելու նպատակով։ Բոլոր գաղթել ցանկացողները դիտաւորութիւն ունեն երկրագործութեամբ պարապել։

—«Порядокъ» լրագիրը հաղորդում է, որ Մէկկայում իսլերա յայտնվելու պատճառով Կ. Պոլսի առողջապահական յանձնաժողովը, Բ. Դերան համաձայնութեամբ, հրամայեց, որ մահմետական սուրբ տեղերը ուխտաւորներ տանող նաւերը չը մտնեն Սև ծովի նաւահանգիստները։ Այդ պատճառով, Ոսկեղջիւրին մօտեցած ռուսաց շոգենաւը, իր ճանապարհը չարունակելուց առաջ, ստիպված էր նաւի վրա եղող ուխտաւորներին ափը իջեցնել։ Նրանք մի ուրիշ շոգենաւով յետ կուղարկվեն Ռուսաստան։

—«Times» լրագրում տպված է այն թղթակցի երկրորդ նամակը, որը այնքան մեծ աղմուկ հանեց Թիւրքիան բաժանելու իր նախագծով։ Նա հաստատում է իր խօսքերը, ասելով, թէ իր տեղեկութիւնները պաշտօնական աղբիւրից է ստացել։ Նրա կարծիքով. «Բալկանեան թերակղզու վրա փոքրիկ ինքնավարութիւն ունեցող պետութիւններ կազմակերպելու գաղափարը բոլորովին խիմէրա է, աչքի առաջ ունենալով արևելեան ցեղերի անզարգացողութիւնը և միմեանց դէմ ունեցած թշնամութիւնը։ Այդպիսի ինքնավարութիւնը միայն անդադար պատերազմների պատճառ կը դառնար։ Արևելեան փոքրիկ պետութիւնները չեն կարող զարգանալ, առանց կենտրոնական իշխանութեան տիրապետող ազդեցութեանը, որը միայն Աւստրիան կարող է լինել։ Բայց յիմարութիւն կը լինէր մտածել, որ Աւստրիան յանձն կառնի այդ խնդիրը անշահասիրութեամբ։

—Ֆրանսիական լրագիրները հաղորդում են, որ նախագահ Գրէվի իր եղբօր՝ Ալժիրիայի գեներալ-նահանգապետի հետ, փարիզ վերադարձաւ։ Ժիւլ Ֆէրրիի նախագահութեամբ կայացած մինիստրների խորհրդում, կաբինէտի անդամները վճռեցին, հանրապետութեան նախագահի ցանկութեան համաձայն, հոկտեմբերի 17-ին հրաժառական տալ։ Խնդիրքը կընդունվի և կը հրատարակվի միայն այն պայմանով, որ նրանք կը պահպանեն իրանց պորտֆէյլները մինչև նոր կաբինէտի կազմվելը։ Ամենքը հաւատացած են, որ նախագահը Դամբէտտային կառաջարկի այդ գործը, բայց որ նա բանակցութիւնները կը քաշքշի մինչև պատգամաւորների նոր ժողովի բացվելը։

ԽԱՌՆ ԼՈՒՐԵՐ

Ամերիկական լրագիրները գրում են այն ահագին օգուտի մասին, որ տալիս է էլէկտրականութիւնը։ Երեսուն և ութ տարի առաջ, փոթորկից վնասված «Վէրմիլիօն» նաւը խորասուզվեցաւ Էրա լճի ջրերում։ Այդ նաւի վրա դարսած էր տակառներով պղինձ, որի արժողութիւնն էր վաթսուն հազար դօլլար։ Շատ անգամ յայտնվում էին բազմաթիւ մարդիկ, որոնք աշխատում էին գտնել այդ կորած հարստութիւնը, բայց ոչ ոք չէր կարողանում որոշել տեղը, թէ ինչ տեղ նաւը ջրի տակ գնաց։ Այդ բանը գտաւ էլէկտրականութիւնը։ Մէկ փոքրիկ նաւ պատրաստեցին, որի վրա դրին նոր հնարած էլէկտրական մեքենան, որ հեռու տարածութեան վրա ցոյց է տալի մետալների ներկայութիւնը։ Լճի մէկ շատ խոր տեղում էլէկտրական մեքենան ցոյց տուեց մետալի ներկայութիւնը։ Ցած թողեցին ջրասոյզին, և երեսուն ու ութ տարի ծովի խորքում թաղված հարստութիւնը ժամանակակից հնարագիտութեան աւար դարձաւ։

* * *

Մայնց քաղաքը մինչև 1866 թիւը, այսինքն մինչև այն ժամանակը, երբ նա գերմանական կայսրութեան քաղաք դարձաւ, ունէր չափից դուրս զանազանակերպ հիմնարկութիւններ և կատարելապէս կոսմոպոլիտական քաղաք կարող էր համարվել։ Հէսսէնեան երկրագործներ, ֆրանսիական օրէնքներ, գերմանական ազգաբնակութիւն, հռոմա-կաթոլիկական եկեղեցի, պրուսական կոմենդանտ, աւստրիական նահանգապետ, տուրնական փօստ, բաւարական հեռագիր և Բաղէնի գաղային ընկերութիւն։ Եւ ճշմարիտ, որ քաղաքը աշխարհիս երեսին կարող է ցոյց տալ իր մէջ այդքան զանազանակերպ հիմնարկութիւններ։

* * *

Կապրէրայից գրում են մի քանի մանրամասնութիւններ Գարիբալդիի մասին։ Ծերունին իրան շատ լաւ է զգում, շատ զբօսնում է իր կնոջ և երեխաների հետ, կարդում է, գրում է, սիրով խօսում է իրան այցելողների հետ, բայց բոլոր նրա հոգսերը, գլխաւորապէս, կենտրոնացած են իր որդու կրթութեան վրա, որը, ինչպէս ասում են, շատ նման է նրան։

* * *

Գէնուէզեան լրագիրները յայտնում են, որ Մադրիդ քաղաքում գաղթականութիւնների վարչութեան շինութեան պահեստներում գտնվեցաւ Քրիստոֆոր Կոլումբոսի պատկերը, որը դեռ մեծ ծովագնացի կենդանութեան ժամանակ իւղաներկով է նկարված։ Այդ պատկերը շատ գեղեցիկ պահպանվել է և նրա վրա հետևեալ գրութիւնն է գտնվում։ «Columbus Ligur novi orbis repertor» (Կոլումբոս Լիգուրից, որը գտել է Նոր Աշխարհը։) Պատկերից հանած առաջին կոպիան ընծայվեցաւ դուքս Վէրագուին, որը Քրիստոֆոր Կոլումբոսի այժմեան սերունդներից մէկն է։

«ՄՇԱԿԻ» ՀԵՌԱԳԻՐՆԵՐ

ՄԻԱԶԱԳԱՑԻՆ ԸՆԿԵՐՈՒԹԵՆԻՑ

Ս. ՊԵՏԵՐԲՈՒՐԳ, 5 հոկտեմբերի։ „Новое Время“ լրագիրը հաղորդում է. հողերը յետ գնելու վճարքների էկսպերտների խորհուրդը որ քննում էր յետ գնելու ապառիկների հարցը, կարծիք յայտնեց, որ ապառիկները հաւաքվել են գիւղացիների աղքատութեան պատճառով։ Ապառիկների ներելը ամեն տեղ անհրաժեշտ է։ Էկսպերտների կարծիքով, դա կայսերական ողորմութեան գործ կը լինէր։ Կայսրով առաջարկեց ապառիկները հանել հաշիւներից։ „С.-Петерб. Вѣдом.“ լրագիրը հաղորդում է լուր, իբր թէ թատրոնները մեծ պասին փակված կը լինեն։ Լուր կայ, որ երկաթուղիների ընկերութիւնները նոր արտօնութիւններ են ստանում տարիֆի վերաբերութեամբ։

Խմբագիր—հրատարակող ԳՐԻԳՈՐ ԱՐԾՐՈՒՆԻ

պաշտպանը արդէն խնդրել է դադարեցնել դատաստանական քննութիւնը մինչև հրաւիրված վկաները հաւաքվին։

ԳԵՐՄԱՆԻԱ

Զը նայելով, որ կոմս Հայնֆելդ չէ կամենում թողնել դեսպանի պաշտօնը Կ. Պոլսում, այնու ամենայնիւ Բերլինի մէջ նրա համար պատրաստում են արտաքին գործերի մինիստրի պաշտօնը։ Հաւանական է, որ գերմանական դեսպան Կ. Պոլսի մէջ կը նշանակվի Բադէնից։

Բայխստագի գումարումը նշանակված է նոյեմբերի 15-ին։ Բայխստագին ներկայացնելու առաջարկութիւնները կը քննվին նախապատրաստական ժողովի մէջ և նախագիծների բովանդակութիւնը կախված կը լինի նրանից, թէ բայխստագը ինչպիսի կազմակերպութիւն կունենայ։ Եթէ բայխստագի մէջ իշխան Բիսմարկի կողմնակիցներից մեծամասնութիւն կը կազմի, նա կը շարունակէ իր գոյութիւնը, հակառակ դէպքում ծննդեան տօներից յետոյ բայխստագը կարձակվի և նոր ընտրութիւններ կը նշանակվին։ Եթէ մինչև անգամ իշխան Բիսմարկին ձեռնտու մեծամասնութիւն կազմվի, այնու ամենայնիւ առաջին շրջանին կառավարութիւնը չի ներկայացնի ծխախոտի արտօնութեան և բանւորների ապահովելու օրինագիծները։

Պաշտօնական լրագիրները պաշտպանում են կառավարութեանը այն մեղադրանքի դէմ, իբր թէ նրա անզգոյշ վարմունքը առիթ է տուել Վատիկանի և գերմանական կառավարութեան մէջ կատարվող բանակցութիւնների սառնութեանը։ Լրագիրները պնդում են, որ երկու կառավարութիւնների մէջ խաղաղ բանակցութիւնները շարունակվում են և կարող են ցանկալի հետևանքներ ունենալ։

Պրուսական պարլամենտի նախկին պատգամաւոր Ֆոն-Ունրու, որ հրատարակեց իր յիշողութիւնները իշխան Բիսմարկի գործունէութեան մասին 1848 թուականից, յայտնում է լրագիրների մէջ, որ նա մտադիր է դատաստանի ենթարկել իշխանի օրգան „Nord Deut. Alg. Zt.“ լրագիրը վիրաւորանքի համար։ Յիշեալ լրագիրը անազնուութիւն է անուանում իշխան Բիսմարկի մասնաւոր խօսակցութիւնների հրատարակութիւնը, որոնցով իշխանը անհամակրելի անձնաւորութիւն է նկարագրվում։ Բիսմարկի լրագիրը իր սովորութեան համեմատ խստութեամբ յարձակվեցաւ Ֆոն-Ունրուի դէմ և այժմ նա կենթարկվի դատաստանական պատասխանատուութեանը։

ԱՐՏԱՔԻՆ ԼՈՒՐԵՐ

—«Times» լրագրի Բերլինի թղթակիցը հաստատում է, որ իշխան Բիսմարկ իր մասնաւոր խօսակցութեան ժամանակ Բերլինի կոնգրէսի անդամների հետ, չէր ծածկում, որ Բալկանեան թերակղզու ապագան պատկանում է Ռուսաստանին և Աւստրիային և որ Անգլիան ոչինչ չունի արգելել այդ պետութիւններին հասնելու իրանց նպատակին, միայն թէ թողնէին իրան Եգիպտոսը։

—Աւստրիական լրագիրների խօսքերով Բուխարէստում, Կասայում, Գալացում և ռումինական այլ քաղաքներում կազմվեցան հրէական մասնաժողովներ օգնելու հրէաների գաղթականութեանը Պալէստինում։ Մի և նոյն նպատակով բացված են փողի ժողովարարութիւններ, որոնք շատ յաջող են գնում։ Կենտրոնական մասնաժողովը դիմեց Թիւրքիայի ներկայացուցչին Բուխարէստում հրէական ազգաբնակութեան համար հողեր ձեռք բերելու նպատակով։ Բոլոր գաղթել ցանկացողները դիտաւորութիւն ունեն երկրագործութեամբ պարապել։

—«Порядокъ» լրագիրը հաղորդում է, որ Մէկկայում իսլերա յայտնվելու պատճառով Կ. Պոլսի առողջապահական յանձնաժողովը, Բ. Դերան համաձայնութեամբ, հրամայեց, որ մահմետական սուրբ տեղերը ուխտաւորներ տանող նաւերը չը մտնեն Սև ծովի նաւահանգիստները։ Այդ պատճառով, Ոսկեղջիւրին մօտեցած ռուսաց շոգենաւը, իր ճանապարհը չարունակելուց առաջ, ստիպված էր նաւի վրա եղող ուխտաւորներին ափը իջեցնել։ Նրանք մի ուրիշ շոգենաւով յետ կուղարկվեն Ռուսաստան։

—«Times» լրագրում տպված է այն թղթակցի երկրորդ նամակը, որը այնքան մեծ աղմուկ հանեց Թիւրքիան բաժանելու իր նախագծով։ Նա հաստատում է իր խօսքերը, ասելով, թէ իր տեղեկութիւնները պաշտօնական աղբիւրից է ստացել։ Նրա կարծիքով. «Բալկանեան թերակղզու վրա փոքրիկ ինքնավարութիւն ունեցող պետութիւններ կազմակերպելու գաղափարը բոլորովին

լինել ընդդիմադրելու և պատժելու, իսկ այն արարմունքը, որ անգիտութեան կամ սխալմունքի արդիւնք է, նա հասկանալի է, որ չէ կարող պարունակել իր մէջ անիրաւութիւն և հետևապէս կրել օրէնքի կողմից պատիժ։

Ինչպէս որ ժողովուրդը կռիւ է բաց անում ոչ թէ մի կոտոր հողի պատճառով, այլ թէ իր սեփական իրաւունքը պաշտպանելու և ոտնակոխ եղած պատիւը և անկախութիւնը կանգնեցնելու, այնպէս էլ գիւղացին պէտք է պնդի և հաստատուն կերպով պաշտպանէ ոչ թէ միայն կորած կամ ոչնչացրած սեփականութեան իրաւունքը, որ (այսինքն կորած բարիքը) շատ անգամ կարող է լինել աննշան, այլ նոյնպէս ապահովացնել և պաշտպանել անձնական պատիւը և յայտնել իրաւական զգացմունքը։ Պարզ է, որ վէճը հիմնված լինելով կայքի վրա շատ անգամ փոխում է իր բնաւորութիւնը և ստանում է բարոյական կերպարանք։

Ի հարկէ, ինչպէս փորձը ցոյց է տալիս, շատերը կան, որ այսպիսի դէպքերում հակառակ ընթացք են բռնում, որոնց համար հանգստութիւնը աւելի թանդ արժէ, քան թէ իրաւունք վայելելը։ Ի՞նչպէս պէտք է վերաբերվենք սրան. կարելի ասել թէ այս քեփից և բնութիւնից է կախված, մէկը սիրում է կռուել, ընդդիմադրել, միւսը հանդիստ ապրել. ի հարկէ իրաւական կէտից նայած երկուսն էլ հաւասարութեան արժանի են, որովհետև ամեն մարդ իրաւունք ունի իր իրաւունքը պաշտպանել և չը պաշտպանել, բայց ես, ասում է Երինգը, համարում եմ այս հայացքը վերին աստիճանի ծուռ, անբարոյական և հակառակ իրաւունքի էութեան. եթէ յիշեալ հայացքը տարածվէր և գործադրվէր ամեն ուրեք, այն ժամանակ մեզ կը ներկայանար իրաւունքի այն տխուր վիճակը, որտեղ նա իր հաստատութեան համար ի տեղի քարոզելու քաջութեամբ կռուել անիրաւութեան դէմ, կը սովրեցնէր մեզ երկչոտութիւն։ Իսկ իմ համոզմունքս այսպէս է —անիրաւութեան դէմ գնելը իրաւաքանչիւրիս պարտականութիւնն է ա) յանուն իր սեփական անձի, որովհետև այդ ինքնապահպանութեան հիմն է, բ) յանուն հասարակութեան օգտին, որովհետև նրան հետևելու համար հարկաւոր է որ այս համոզմունքը դառնար ընդհանուր։

Այն աստիճանը, որով իրական զգացումը դրդում է ընդդիմադրել անիրաւութեան դէմ, կարող է ծառայել, իմ (հեղինակի) կարծիքով, ուղիղ մաշտաբ (չափս) թէ ինչպէս է հասկանում այս կամ այն ազգը կամ անհատը իրաւունքի նշանակութիւնը։

Ես այս համարում եմ անհերքելի ճշմարտութիւն, որ կարող է վերաբերել թէ հասարակական իրաւունքի (общественное право), թէ անհատական (частное право)։

Մի և նոյն է թող ինչ ուզում է լինի իրաւունքի առարկան։ Եթէ այս առարկան ձեռք եմ բերել սեփական աշխատութեամբ կամ ժառանգելով ուրիշից, նա իմն է, ես նրան տէրութիւն եմ անում և պահելով նրան՝ պահում եմ և պաշտպանում եմ նրանում իմ կամ ուրիշի աշխատութեան արդիւնքը։ Տիրելով այդ առարկային, ասում է գերմանացի իրաւաբանը, ես նրան դրոշմում եմ իմ անձնաւորութեամբ, ով նրան կպչում է՝ ինձ է կպչում, այն հարուածը որ նրան են ուղղում՝ ինձ է դիպչում, որովհետև նրա մէջ ներկայ է իմ անձնաւորութիւնը։ Այս սերտ կապը իրաւունքի և անձնաւորութեան մէջ յայտնացնում է բոլոր իրաւունքներին անչափ գին, որը ես ի հանդիպութիւն նրա նիւթական արժէքին, անուանում եմ իդէալական արժէք։ Այս իդէալական արժէքի շնորհիւն է, որ գիւղացին իրանից խլած մի քանի խուրձ խոտի կամ ցորենի համար դատ է բացանում անիրաւին պատժելու համար, թէկուզ առաջուց գիտենար, որ մեծ զալմաղալի մէջ կընկնի և գուցէ նպատակին էլ չի հասնի։ Այդ իդէալական արժէքն է, որ ներշնչում է մարդու մէջ արիութիւն իր ոտնակոխ եղած իրաւունքը պաշտպանել, ինչ դասակարգի նա պատկանում լինի, կրթված թէ տգէտ և, ինչպէս ասացի, այն աստիճանը, որով իրական զգացումը դրդում է ընդդիմադրել անիրաւութեան դէմ, փորձաքար կարող է լինել թէ որքան զարգացած է իրաւաճանաչութիւնը։ Բայց զգալ մէկից անիրաւութիւն և չը հետամտել ոտնակոխ եղած իրաւունքը պաշտպանել, չը պահանջել վտանգը, կամ համբերութեամբ տանել հարուածը, կը նշանակէ հրաժարվել իրաւունքից, որ գուցէ ներելի է մասնաւոր դէպքերում հանգամանքների պատճառով, բայց կունենայ կորստարեր հետևանք, եթէ այդ չարունակվի երկար, զգացողութիւնը բոլորովին կը բթանայ, մինչև որ հազիւ ցաւ կը զգայ։

Եթէ գիւղացին թողնէ անպատիժ ոչխարը խլող աւազակին, թող հաստատ գիտենայ, որ միւս օրը կոմն էլ կը տանի, մի քիչ էլ որ սպասէ, արտերի ցանքն էլ կը տանի, մի քիչ էլ որ սպասէ, աղջիկն էլ կը փախցնէ և վերջապէս ամբողջ գիւղը իր բնակիչների երկչոտութեան շնորհիւ

բոլորովին կը թալանվի և կը փչանայ չարաճճի խմբից։

Որտեղ կայ անաչառ դատաւոր. պէտք է դիմել նրան իրաւունքի պաշտպանութեան համար, իսկ եթէ չը կայ, եթէ տէրութիւնը իր ժողովրդին չէ պաշտպանում, ինչպէս այդ պատահում է Տաճկաստանում և ուրիշ վայրենի երկրներում, այնտեղ մարդ աւազակին դէմ գնելու համար պարտաւոր է ինքն իրան պաշտպանել։

Ինքնապաշտպանութիւնը մարդուս ամենասրբազան իրաւունքն է, որ տուած է ինքը բնութիւնը։ Եւրօպական բոլոր կոդէկսները, ինչպէս յայտնի է, թոյլ են տալիս մարդուս վտանգի ժամանակ, եթէ օրինական միջոց անյարմար չէ կարելի գործադրել, դիմել սեփական զօրութեան (право необходимой обороны)։

Ահա ինչ է ասում գերմանացի փիլիսոփայ Կանտը այդ հարցի մասին։ «Տէրութիւնը կազմվելու ժամանակ ամեն մի անհատ հրաժարվում է իրան պաշտպանելու իրաւունքից այն պայմանով, որ տէրութիւնը ինքը հարկաւոր ժամանակ նրան պահպանէ, բայց երբ այս վերջինը չէ ուզում կամ չէ կարող իր պարտքը կատարել, այն ժամանակ մարդ կրկին իր ձեռքն է բերում ինքնապաշտպանութեան իրաւունքը»։

«Իրաւունքը, ասում է Բերնէր (Հեգելի հետևող), չը պէտք է խոնարհվի անիրաւութեան առաջ, երբ այս վերջինը ոտնակոխ է անում արդարութիւնը, թող իրաւունքը հզօր կերպով ընդդիմադրէ»։

Մոսկվա Բաղդասար Սարգսեանց